Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում
Առարկա. Մակրոէկոնոմիկա
Անոտացիա
Աշխատատարությունը՝ *6 կրեդիտ, 216 ակադեմիական ժամ*

Համառոտ նկարագրություն. Մակրոէկոնոմիկա դասընթացը ներկայացնում է իրենից մակրոէկոնոմիկայի տեսական հիմքերը, ուսումնասիրում է մակրոտնտեսական այնպիսի հիմնական հասկացություններ, ինչպիսիք են՝ ՀՆԱ-ն, տնտեսական աճ, գործազրկություն, գնաճ և այլն: Դասախոսությունների ընթացքում մանրամասն ուսումնասիրվում են պետության դերը տնտեսության մեջ, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունները, ինչպես նաև փողի և բանկային համակարգի դերը տնտեսության մեջ:

Նշված թեմաներն ուսումնասիրելուց հետո, վերլուծության է ենթարկվում մակրոտնտեսական քաղաքականությունը բաց տնտեսության մեջ, մասնավորապես, վճարային հաշվեկշռի դերը և դրա կառավարման մեթոդները, ինչպես նաև արժութային քաղաքականության առանձնահատկությունները: Առանձնին թեմաներ նվիրված են տնտեսական աճի և միջազգային համագործակցության ժամանակակից ռազմավարություններին:

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մակրոտնտեսական տեսության և մակրոտնտեսական քաղաքականության խնդիրների հետ: Դասընթացի խնդիրներ են.

- ուսումնասիրել ազգային տնտեսության գործունեության մեխանիզմը,
- հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների և դրանց փոխհարաբերությունների վերլուծություն;
- վիճակագրական տվյալների օգտագործման հմտությունների զարգացում և մակրոտնտեսական գործընթացների դինամիկայի գործնական վերլուծություն:

Դասախոսություններն ընթանում են ակտիվ շփման ձևաչափով, որն ուսանողներին հնարավորություն է տալիս հարցադրումներ կատարել, քննարկել՝ տվյալ թեմայի հետ կապված, ժամանակակից հարցեր, անմիջական մասնակցություն ունենալ նոր տեղեկատվության յուրացման գործընթացում:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. «Մակրոէկոնոմիկան» հանդիսանում է մասնագիտական գործընթացի հիմնական մաս և փոխկապակցված է «Տնտեսության պետական կարգավորումը», «Մեգաէկոնոմիկա», «Անցումային շրջանի տնտեսագիտության հիմնախնդիրները» առարկաների հետ:

Ուսանողների գիտելիքների և հմտությունների սկզբնական մակարդակների նկատմամբ պահանջները. Մակրոէկոնոմիկայի դասընթացների ուսումնասիրությունը ենթադրում է միկրոէկոնոմիկայի և մաթեմատիկայի բնագավառում հիմնական գիտելիքների առկայություն: